Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան

17.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ի. Բաղմանյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա. Աթանեսյանի
Վ. Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 26-րդ, 25-րդ, 27-րդ հարցերը:

Հարց 26

Հավակնորդի կողմից հարցի վերաբերյալ ներկայացված փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ձևակերպումը (կարող է հանգեցնել) թույլ է տալիս ենթադրել, որ որոշակի դեպքերում վկա հարցաքննելու վերաբերյալ միջնորդությունը կարող է հանգեցնել կողմերի մրցակցության սկզբունքի խախտման:

Հարց 25

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցի ճիշտ պատասխանը բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավակարգավորումներից:

Հարց 27

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցի վերաբերյալ առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշում:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԴ/31316/02/20 քաղաքացիական գործով 02.12.2021 թվականի որոշմամբ անդրադառնալով այն այն իրավական հարցադրմանը, թե արդյո՞ք էլեկտրոնային եղանակով կատարված պետական տուրքի վճարման վերաբերյալ փաստաթուղթը կարող է համարվել պետական տուրքի վճարման փաստը հավաստող պատշաճ ապացույց այն դեպքում, երբ այն ներկայացված է թղթային տարբերակով և դրանում առկա է վճարող

իրավաբանական անձի իրավասու անձի էլեկտրոնային ստորագրությունը, արձանագրել է, որ էլեկտրոնային եղանակով կատարված վճարումների վերաբերյալ վճարահաշվարկային փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում պահանջվում է բացառապես վճարող իրավաբանական անձի իրավասու անձի ստորագրությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 8126 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ _____ **Ի. ԲԱՂՄԱՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ _____ **Ա. ԱԹԱՆԵՍՅԱՆ**

_____ **Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ**